

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/9**  
**19 հունվարի 2018թ.**

Քննարկվեց «ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ բողոքը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

**«ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.**

2017թ. հոկտեմբերի 16-ին «ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկ, որում որպես հաշվետու ժամանակաշրջան 3-րդ եռամսյակի փոխարեն սխալմամբ նշվել է սեպտեմբեր ամիս:

Կապանի ՏՀՏ-ի կողմից 2017թ. հոկտեմբերի 20-ին առաջացել է ընկերության կողմից ներկայացված հաշվարկի ԱԱՀ-ն 11.809.473 դրամ գումարով, որն ընկերությունը մարել է ամբողջությամբ:

2017թ. դեկտեմբերի 14-ին Կապանի ՏՏՏ-ի կողմից հայտնաբերվել է սխալը և առաջարկվել է ուղղել այն: Ընկերության կողմից ներկայացվել է ճշտված ԱԱՀ-ի հաշվարկ 3-րդ եռամսյակի համար 11.809.473 դրամ գումարով:

Ընկերության կողմից ներկայացված 3-րդ եռամսյակի հաշվարկը Կապանի ՏՀՏ-ի կողմից դիտարկվել է որպես ժամկետից ուշ ներկայացված և կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված 5% տուգանքը՝ 1.737.598 դրամի չափով:

Ընկերությունը խնդրում է վերանայել հաշվարկված տուգանքը, քանի որ հաշվետվությունը սխալմամբ է ներկայացվել որպես սեպտեմբեր ամսվա համար, իսկ առաջացած հարկն ընկերության կողմից ամբողջությամբ վճարվել է: Սխալը եղել է անուշադրության արդյունք:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ-ն 2017թ. ընթացքում հանդիսացել է եռամսյակային ԱԱՀ վճարող: Ընկերության կողմից 2017թ. հոկտեմբերի 16-ին ներկայացվել է 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, որում, սակայն, հաշվետու ժամանակաշրջանը 3-րդ եռամսյակի փոխարեն թյուրիմացաբար նշվել է սեպտեմբեր ամիսը:

Այնուհետև, Ընկերության կողմից 2017թ. դեկտեմբերի 13-ին ներկայացվել է 2017թ. սեպտեմբեր ամսվա զրոյական ԱԱՀ-ի հաշվարկ, ինչպես նաև՝ 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը: Այսինքն, ընկերության կողմից 2017թ. հոկտեմբերի 16-ին, ըստ էության, 2017թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը՝ դրանում տեղ գտած վրիպակի հետևանքով, համարվել է չներկայացված, և քանի որ 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացման ժամկետը եղել է մինչև հոկտեմբերի 20-ը, ուստի դեկտեմբերի 13-ին 2017թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված ԱԱՀ-ի գումարի նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 1.771.421

դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ 2017թ. հոկտեմբերի 16-ին, ըստ էության, 2017թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Քննարկվող դեպքում մեխանիկական սխալ (վրիպակ) տեղի ունենալու մասին է վկայում այն հանգամանքը, որ թե 2017թ. հոկտեմբերի 16-ին, թե դրանից հետո 2017թ. դեկտեմբերի 13-ին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկները՝ դրանցում արտացոլված տվյալների առումով, նույնական են:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով ընկերության նկատմամբ հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վերանայման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչությանը.

«ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ անձնական հաշվի քարտում կատարել պարտավորությունների վերահաշվարկ՝ նվազեցնելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ